ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2017 թվական N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 208-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հասարակական նշանակության շենք-շինություններն ու դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերն անհատույց օգտագործման տրամադրելու և Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 195-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 208-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «շինությունը» բառից հետո լրացնել «36.08 (երեսունվեց ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը» բառերը և թիվը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

	Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ս. Բալասանյան			
Ա. Ադամյան			
Հ. Կարապետյան			
Լ. Խաչատրյան			
Է. Մկրտչյան			
Տ.Հովհաննիսյան			
Մ. Սահակյան			

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» մայիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2017 թվական N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 16-րդ և 28-րդ կետերով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ):
2. Հաստատել հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
3. Հաստատել հիմնարկին ամրացվող գույքի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Հաստատել հիմնարկի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:
5. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի ղեկավարի ներկայացրած հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Լեռնիկի Մկրտչյանի թեկնածությանը (ծնված՝ 1983 թվականի օգոստոսի 14-ին, նույնականացման քարտ՝ 004096863, տրված՝ 2014 թվականի օգոստոսի 06-ին, Հայաստանի Հանրապետության Ոստիկանության 030-ի կողմից, հաշվառված՝ Շիրակի մարզ, գյուղ Վահրամաբերդ 4-րդ փող., տուն 4, ՀԾՀ՝ 2408830176):
6. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել սույն որոշման 3-րդ կետում նշված հիմնարկին ամրացվող գույքի հաշվապահական ձևակերպումները:
7. Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը՝ հիմնարկն օրենքով սահմանված կարգով հաշվառելու համար:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» մայիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2017 թվական N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 22 (ՔՍԱՆԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրի համայնքի թվով 22 (քսաներկու) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տնօրինության տակ գտնվող շենքերի և գույքի պահպանության նպատակով անվտանգության ազդանշանային համակարգ տեղադրելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով կազմակերպությունների տնօրենների՝ համայնքի ղեկավարին ուղղված գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի ապրիլի 19-ին, Դ/6900-17 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի թվով 22 (քսաներկու) կազմակերպություններին, որպես նվիրատվություն, հատկացնել 6.424. 200 (վեց միլիոն չորս հարյուր քսանչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ շենքերի և գույքի պահպանության համար անվտանգության ազդանշանային համակարգ տեղադրելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել՝
   1) Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից,
   2) կազմակերպությունների տնօրեններին, սույն որոշմամբ պայմանավորված, երկշաբաթյա ժամկետում իրենց կողմից ղեկավարվող կազմակերպությունների փոփոխված հաստիքացուցակները ներկայացնել Գյումրի համայնքի ավագանու հաստատմանը:
3. Սույն ուրոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» մայիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» մայիսի 2017 թվական N 58-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2017 թվականի հունիսի 5-ը:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Է. Մկրտչյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» մայիսի 2017 թ.